



## Նիկոլ Աղբալեանի Վաստակին Հետքերով. Գործակցութեան Յուշագիրի Ստորագրութիւն՝ Երեւանի Պետական Համալսարանի Հրատարակչութեան Եւ Համագգայինի «Վահէ Մէթեան» Հրատարակչատան Միջեւ

0 Featured-News, Գաղութային November 6, 2015

PRINT EMAIL A- A+



Երէկ՝ հինգշաբթի, 5 նոյեմբեր 2015-ի երեկոյեան ժամը 6:00-ին, Համագգայինի «Վահէ Մէթեան» հրատարակչատան մէջ տեղի ունեցաւ Երեւանի պետական համալսարանի հրատարակչութեան եւ Համագգայինի «Վահէ Մէթեան» հրատարակչատան միջեւ գործընկերութեան յուշագիրի ստորագրութիւն՝ ներկայութեամբ Երեւանի պետական համալսարանի պատուիրակութեան:

Հրատարակչատան մուտքին ցուցադրուած էին Հայոց ցեղասպանութեան վերաբերեալ Երեւանի պետական համալսարանին վերջին հրատարակութիւնները:



Համագգայինի «Վահէ Մէթեան» հրատարակչատան տնօրէն Յակոբ Հաւաթեան բարի գալուստ մաղթելէ ետք ներկաներուն յայտնեց, որ սոյն հանդիպումին ներկաները համախմբողը միայն հայ գիրն ու գրականութիւնը չէ: 85 տարիներ վերջ այս 2 հաստատութիւնները համախմբողը Հայաստանի Ա. Հանրապետութեան կրթութեան եւ լուսատրութեան նախարար Նիկոլ Աղբալեանն է, որ եղած է հիմնադիրը Երեւանի պետական համալսարանին, ինչպէս նաեւ Համագգային հայ կրթական եւ մշակութային միութեան եւ անոր հրատարակչատան, որ յառաջիկայ

տարի կը բոլորէ իր 85-ամեակը: Հաւաքեան նկատել տուաւ, որ առաջին յարգանքը եւ առաջին նուաճումը կը պարտինք Նիկոլ Աղբալեանի, իր նախաձեռնութեան, որոշումներուն եւ անդով աշխատանքին՝ հայրութեան բոլոր հատուածներուն մէջ: Ան ուրախալի նկատեց պահը, որովհետեւ «Երբ Հայաստան-սփիւռք համագործակցութեան մշակութային, կրթական եւ հրատարակչական մարզերուն մէջ յառաջանանք, սփիւռքը աւելի կը զօրանայ, Հայաստանը աւելի կը հարստանայ» աւելցնելով, որ համաձայնագիրները թուրքի կտորներ են, եթէ անոնք կենք չստանան գործակցութեամբ: Հաւաքեան ըսաւ, որ Երեւանի պետական համալսարանին հետ լիբանանահայ գաղութի համագործակցութիւնը երկու տարուան դանդաղ քայլերով փորձառութիւն ունի, եւ յոյս յայտնեց, որ անոնք վերածուին հաստատ քայլերու եւ մօտիկ ապագային արդիւնաւորութիւն: Անդրադառնալով հրատարակչական մարզին՝ Հաւաքեան նկատել տուաւ, որ երկու կողմերուն միջեւ համագործակցութիւնը իբրեւ խորհրդակցութիւն եւ կարծիքներու փոխանակում բիրտեղացած է՝ աւելցնելով, որ Համազգայինի «Վահէ Մէթեան» հրատարակչատան համագործակցութիւնը հայաստանեան բազմաթիւ հրատարակչատուներու հետ, յատկապէս մանկապատանեկան գրականութեան մարզին մէջ, արդէն իր գործնական քայլերը առած է, եւ ներկայիս կան հրատարակչութիւններ, որոնց հրատարակչութիւնը համագործակցաբար կը պատրաստուի հայաստանեան հրատարակչատուներու հետ: «Այսօր այս համագործակցութիւնը մէկը աւելիով կը հարստանայ եւ կ'արմատաւորուի ի դէմս Երեւանի պետական համալսարանին, այս պարագային գիտահետազոտական եւ հայ ժողովուրդի վաւերական արժէքներուն տարածման իմաստով, եւ առիթը կ'ունենայք դնելու այս համագործակցութեան նոր հիմերը, որոնք պիտի ընդգրկեն ծրագիրներ գրատարածման մարզին մէջ, միացեալ հրատարակչութիւններ, նաեւ ուսանողներու հրատարակչութիւններու փոխանակում, որպէսզի սփիւռքը ծանօթանայ հայաստանեան իրականութեան եւ Հայաստանի ուսանողութիւնը ծանօթանայ սփիւռքի մտածողութեան ու ներուժին» հաստատեց Յակոբ Հաւաքեան:

Երեւանի պետական համալսարանի հրատարակչատան տնօրէն Գարէն Գրիգորեան իր կարգին խօսք առնելով ներկայացուց համալսարանի հրատարակչատան տարած գործունէութիւնը: Ան յայտնեց, որ 1919 թուականին հիմնադրուեցաւ Երեւանի պետական համալսարանը, եւ յետագայ եր, որ յաջորդող տարիներուն պէտք էր հրատարակուէին գիրքեր, դասագիրքեր, ուսումնական եւ կրթական ձեռնարկներ: 1920 թուականին համալսարանին մէջ տպագրուած է առաջին դասագիրքը՝ որ հոգեբանութեան դասագիրք էր, նաեւ առաջին թերթը: Ան նկատել տուաւ, որ համալսարանի հրատարակչութիւնը այս տարի նշած է իր 95-ամեակը՝ աւելցնելով, որ տարիներու ընթացքին իրենց հրատարակչական աշխատանքները տարբեր ուղղութիւններով ընթացած են. հրատարակուած են արժէքաւոր բառարաններ, ինչպէս՝ հայոց լեզուի «Հայկազեան բառարան»-ը, Մալխասեանի «Հայերէնի բացատրական բառարան»-ը, Հրաչեայ Աճարեանի «Արմատական բառարան»-ը, Աշոտ Սուրբասեանի «Հումանիշներու բացատրական բառարան»-ը, «Գրաբարի բառարան»-ը, «Արեւմտահայերէնի բառարան»-ը, լեզուներու բառարաններ: Գարէն Գրիգորեան ըսաւ, որ վերջերս լոյս տեսած է նաեւ հայերէն-անգլերէն եւ անգլերէն-հայերէն ցեղասպանագիտութեան բառարանը, ուր զետեղուած են ցեղասպանութեան առնչուող բոլոր բառերը: Շարունակելով իր խօսքը՝ Գրիգորեան յայտնեց, որ համալսարանին հրատարակչական ուղղութիւնը զարգացած է նաեւ գեղարուեստական աշխատանքներու հրատարակութեամբ: Ան անդրադարձաւ վերջին տարիներուն համալսարանին իրականացուցած հիմնական աշխատանքներուն, ինչպէս՝ գիրքերու թուայնացման աշխատանքները, էլեկտրոնային գիրքերու ստեղծումը: Խօսելով «Վահէ Մէթեան» հրատարակչատան հետ համագործակցութեան մասին՝ ան նշեց, որ կողմերը քննարկած են էլեկտրոնային գիրքեր ստեղծելու հարցը, ինչպէս նաեւ միացեալ հրատարակչութիւններու իրականացման կարելիութիւնները, ինչպէս օրինակ՝ հայոց պատմութեան դասագիրքի հրատարակչութիւնը: Գրիգորեան ըսաւ, որ համալսարանին հրատարակած գիրքերը կարելի է գտնել Համազգայինի գրախանութիւն մէջ՝ աւելցնելով, որ համալսարանը համագործակցութեան մէջ է նաեւ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան գրադարանին եւ հրատարակչութեան հետ եւ մտադրած են իրենց գիրքերէն նուիրել կաթողիկոսարանին, նաեւ մասնագիտական գիրքեր հրատարակել համագործակցութեամբ կաթողիկոսարանի հրատարակչութեան:

Երեւանի պետական համալսարանի Հայագիտական հետազոտութիւններու հիմնարկի փոխտնօրէն Միւր Յովհաննիսեան ելոյթ ունենալով հպարտանքի եւ ուրախութեան պահ նկատեց սոյն հանդիպումը: Ան նկատել տուաւ, որ փոխադարձ կապերու ամրապնդումը կարելիութիւն կու տայ երկու կողմերուն ծանօթանալու հայագիտական մարզին մէջ եղող հարցերուն, որոնք տարիներու ընթացքին կ'աւելնան: Ան առաջարկեց, որ յառաջիկային ոչ հայագիտական գիրքեր ալ հրատարակուին:

Աւարտին Երեւանի պետական համալսարանի հրատարակչատան տնօրէն Գարէն Գրիգորեան եւ Համազգայինի «Վահէ Մէթեան» հրատարակչատան տնօրէն Յակոբ Հաւաքեան ստորագրեցին համաձայնագիրը: